Հարցաշարի գնահատման չափանիշները

XII դասարան

1-ին հարց՝1,4՝ 0,5-ական, 2՝1միավոր,3՝ 2 միավոր
2-րդ հարց՝1,3՝ 0,5-ական, 2՝2միավոր, 4՝1 միավոր
3-րդ հարց՝1,2՝0,5-ական,3՝3 միավոր
4-րդ հարց՝1,2՝1-ական, 3՝3միավոր
5-րդ հարց՝ 1,2,3՝0,5-ական,4՝2,5 միավոր

Հարցաշարերի պատասխանները

XII դասարան

1.Դանիել Վարուժանը՝ գրական ֆիդային, 1909-ին լույս ընծայեց«Ցեղին սիրտը» ժողովածուն, որն սպառվեց աննախադեպ արագությամբ: Այն ունի Նախերգանք, ու սկսվում է «Նեմեսիս» պոեմով, որի մեջ խտացված է գրողի ոգին, նյութը:«Նախերգանքից» առաջ Վարուժանը զետեղել է «Ձոն» բանաստեղծությունը: Ձոն հայրենիքին: Բանաստեղծության հինգ վեցնյակներում երգվում են անցյալի փառքերը, ներկայի տառապանքը և պայքարով ձեռք բերվող գալիքի հաղթանակը:Այն ունի բնաբան՝ Ընդ եղեգան փող բոց ելաներ….
Հինգ տների առաջին տողերը տարբերվում են մեկ բառով.« Եղեգնյա գրչով երգեցի փառքեր»,«Եղեգնյա գրչով երգեցի կարոտ»,«Եղեգնյա գրչով երգեցի արյուն»,«Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի»,«Ու պայքա՞ր, պայքա՞ր, պայքա՞ր երգեցի», իսկ առաջին և վերջին բառերը զուգորդվում են այսպես՝ Փառքեր-լույս, կարոտ-ողբ, արյուն-սիրտս, որբ տունս- ծուխ, պայքար-բոց: «Ձոնը» ի խորոց սրտի ասված սիրո խոստովանություն է, ապրումների, ցավի ու վրեժի երգ:
Շրջասույթներ՝ գրական ֆիդայի, ցեղի շեփորահար:

2.Պարույր Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմը նրա հայրենասիրական տրամադրությունների վերջին արտահայտությունն է, որը լույս է տեսել հեղինակի մահվանից հետո: Այն զետեղված էր «Եղիցի լույս» ժողովածուում, որը կալանված էր նրա կենդանության օրոք: Այն բնույթով ճարտասանական ինքնարտահայտում-մենախոսություն է, որտեղ ի մի են բերվել մեր ժողովրդի պատմական ուղու դժվարին իրադարձությունները: Պոեմը ընդհանրացնում-ամբողջացնում է Մաշտոցին ու Կոմիտասին նվիրված, հայոց լեզվին և հայ ժողովրդին հասցեագրված բոլոր տրամադրությունները: Սևակը բանաձևում է այդ երթի ուղին՝ *ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց՝աշխարհի երեսին* շպրտելով նրա քար անտարբերությունը հինավուրց ժողովրդի անմարդկային սպանդի նկատմամբ: Կրկնվող տողերը վերցրել է գերմանացի բանաստեղծ Շիլլերի բանաստեղծության բնաբանից,որը արձանագրված է Շվեյցարիայի Շաֆհաուզեն քաղաքի եկեղեցու զանգի վրա. որևէ հուղարկավորության առիթով մարդու մահը ողբալու են հրավիրում՝ողբամ մեռելոց, և դրա համար կանչում է ապրողներին, և բեկանում է շանթերը եկեղեցու զանգակատան վրա տեղադրված շանթարգելների միջոցով: Սևակն էլ արթնացման կոչ է անում

քաղաքակիրթ աշխարհին՝ բացառել ցեղասպանությունները՝ ճանաչելով դարասկզբի առաջին ցեղասպանությունը:
Պոեմը ծնունդ է կորսված հայրենիքի կարոտի,այդ հայրենիքը վերագտնելու հույսը՝ Մեր… հայրենի՞քը մեզնից դատարկվեց:
Բայց…ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարթ
Մենք չենք դատարկվել մեր հայրենիքից:

3. Ծմակուտի քուրմը Հրանտ Մաթևոսյանն է. Ծմակուտը համեմատվում է Մթնաձորի հետ, քանի որ Մաթևոսյանը իր ուսուցիչ է համարում Թումանյանին,Բակունցին,Հակոբ Մնձուրուն:

4.30 –ական թվականներին Չարյանը մեղանչեց Չարենցի, Բակունցի, Մահարու, Թոթովենցի և ուրիշների դեմ:Իր ուսուցիչ Չարենցիդեմ մեղանչելով՝ հետագայում գրեց «Զրույց մեռած բանաստեղծի հետ» բանաստեղծությունը,որտեղ, առանց նշելու հանճարեղ բանաստեղծի անունը, զղջում է նրա դեմ գործած մեղքերի համար և խնդրում ներել իրեն՝ Քո մահը իմ կորուստն է դառնակեզ: Ես ողբացել եմ քեզ հազար անգամ:
Հազար ափսոս, որ դու կենդանի չես, Իմ ախոյան, վարպետ և բարեկամ:
Այս նույն տրամադրությունն է արտահայտված նաև«Ասք ի խորոց սրտի» բանաստեղծության մեջ:
1930-ական թվականներին Չարյանը Անդրանիկ զորավարի սուրը համարել էր«արնախում»: Տարիներ հետո, Պեր Լաշեզում այցելելով մեծ զորավարի գերեզմանին, նա հրաժարվում է իր անարդարացի վերաբերմունքից և գրել«Ասք Անդրանիկ զորավարի» պոեմը.
Կիզում է հարցը ինձ, և ես նայում եմ ետ
Եվ կանգ առնում խոցված, ամոթահար,
Չի տարիներ առաջ, Երբ ես դեռ խակ էի, անգետ,
Երբ դեռ այգաբացի մշուշն էր իմ հոգում,
Հիմարաբար, հիմարաբար, հիմարաբար
Քո սուրն ինքնապաշտպան ես անվանել եմ«արնախում»:
Անդրանիկի կերպարը ներկայացվում է 1910-ական թվականների Հայաստանի ողբերգական դեպքերի հենքի վրա: Նա Անդրանիկին անվանում է Հայոց տարաբախտ Գարիբալդի: Գիտակցելով իր գործած մեղքերի աններելի ծանրությունը նա հերողություն է խնդրում նաև հայ ժողովրդից՝ Ես մոլորվել եմ շատ անգամ, Դու ինձ ների՛ր, իմ ժողովուրդ:

5.Վահագն Դավթյանը ծնվել է Արևմտյան Հայաստանի Արաբկիր գյուղաքաղաքում: Նա իր ստեղծագործություններում արծարծում է կորցրած մանկության, հայրենիքի, հայ ժողովրդի անցած հոգևոր ճանապարհի, պայքարի ու մաքառման թեմաներ: Դավթյանը գրել է.«Երևի գրել սկսում են և առհասարակ գրում են ինչ-որ բանի կարոտից» և նրա ստեղծագործության մեջ այդ կարոտը, սիրո ու մտերմության ներդաշնակությունն է: Բանաստեղծությունը Դավթյանի ապրած մանկության, առաջին սիրո, կարոտի ցավագին հիշողությունն է, որ ջերմությամբ պահվել են նրա կոպերի տակ և արթնանում են վերջին անգամ՝այս աշխարհի դեմ աչքերը փակվելիս:Այստեղ հնչում է կորցրած ծննդավայրի մանկության երգը, երազային այն բարակիրան աղջիկը կգա ծվարելու նրա հոգում՝ դառնալով վերջին երգ ու վերջին հրաժեշտ: